

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 մարտի 2013 թվական

գ. Մեծ Սեպասար

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սեպասար համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 13 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազդ Գևորգյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյուդա Հակոբյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Գրիգորյանի, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Մեծ Սեպասար համայնքի ղեկավար Սերգեյ Սողոյանի, Մեծ Սեպասար համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի մարտի 5-ին և ավարտվել՝ 2013 թվականի մարտի 19-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.

- 1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, համայնքի ավագանին չնայած ընդունել է իր կանոնակարգը (2012 թվականի նոյեմբերի 29-ի արձ. թիվ 7, որոշում թիվ 8-Ն), սակայն որոշման հավելվածը բացակայում է.
- 2) համայնքի 2009-2012թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի վերաբերյալ ավագանու որոշումն արձանագրված չէ որոշումների գրանցամատյանում և որոշման հավելվածը